ՍԴ3/0115/01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի նոյեմբերի 19-ին ք.Երևանում

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0115/01/20 դատական գործի ընդդատության վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2020 թվականի նոյեմբերի 1-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 90857719 քրեական գործն ըստ մեղադրանքի Գառնիկ Ազատի Մխիթարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով, և Հարություն Գևորգի Աղայանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, որին շնորհվել է ՍԴ3/0115/01/20 համարը:

2. 2020 թվականի նոյեմբերի 9-ին քրեական գործն ընդունվել է դատավոր Բ.Բախշիյանի վարույթ և նույն թվականի նոյեմբերի 18-ին նշանակվել դատական քննության:

3. 2021 թվականի մայիսի 3-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ամբաստանյալ Գառնիկ Մխիթարյանի պաշտպաններ Ա.Կարապետյանի և Ս.Հովհաննիսյանի միջնորդության քննության արդյունքում, որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0115/01/20 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու, և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու վերաբերյալ:

4. 2021 թվականի մայիսի 11-ին թիվ ՍԴ3/0115/01/20 քրեական գործը ստացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և մակագրվել դատավոր Ն.Բաղդասարյանին:

5. 2021 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

6. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի նոյեմբերի 15-ին:

<u>Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդանուր իրավասության դատարանը 2021 թվականի մայիսի 3-ի որոշմամբ արձանագրել է. *«Սույն քրեական գործի ուսումնասիրությունից դիտվում է, որ ամբաստանյալ Գ.Մխիթարյանը և նրա պաշտպաններ Ա.Կարապետյանը և Ս.Հովհաննիսյանը, ամբաստանյալ Հ.Աղայանը, տուժող Վ.Բդոյանը, տուժողի իրավահաջորդ Ա.Լևոնյանը և նրա ներկայացուցիչ Հ.Գալստյանը, և վկաների ճնշող մեծամասնությունը բնակվում են ինչպես ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական տարածքից, այնպես էլ նշված դատարանի գործունեության վայր հանդիսացող N զորամասի՝ ԱՀ Ստեփանակերտ քաղաքի տարածքից դուրս:*

(…) [Տ]ուժող Վազգեն Բդոյանը 03.05.2021 թվականին դիմում է ուղարկել Դատարան, որով հայտնել է, որ Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում ստացել

է ծանր բեկորային վնասվածքներ և հետպատերազմյան տրավմաներ, որի պատճառով իր առողջական վիճակը թույլ չի տալիս ներկա գտնվելու դատական նիստերին:

(…)

Ամբաստանյալներ Գ.Միսիթարյանը և Հ.Աղայանը միացել են ներկայացված միջնորդությանը և 03.05.2021 թվականի դատական նիստում իրենց համաձայնությունն են տվել թիվ ՍԴ3/0115/01/20 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և գործը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոշարադրյալները, Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործի տարածքային ընդդատությունը անհրաժեշտ է փոխել և այն ուղարկել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ինչը բխում է արդարադատության շահերից, մասնավորապես՝ արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող՝ անձի՝ իր վերաբերյալ քրեական գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքից, տուժողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության արդյունավետությունից: (…)»[1]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 26-ի որոշման համաձայն. *«(…) Համաձայն մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակի՝ վկաներ Պավել Աշոտի Առուստամյանը բնակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղում, Մինաս Հրաչյայի Աբրահամյանը՝ ՀՀ Արմավիրի մարզի Շահումյան գյուղում, Կարեն Վարուժանի Գրիգորյանը՝ Երևան քաղաքում, Արման Սարգսի Ոսկանյանը՝ ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր գյուղում, Զազա Օթարի Խուդոյանը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ճարճակիս գյուղում, Ռաֆայել Արթուրի Սահակյանը՝ Երևան քաղաքում, Համիկ Արայիկի Սիմոնյանը, Աշոտ Գոռի Եգանյանը և Վազգեն Ժիրիկի Նիկողոսյանը՝ Վանաձոր քաղաքում, իսկ վկա Ռոբերտ Հենրիկի Մոսյանը հաշվառված է ԱՀ Հադրութի շրջանի Տումի գյուղում:*

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթեր 223-226:

(…)

Դատարանն արձանագրում է, որ քրեական օրենսգրքով չթույլատրված ենթադրյալ արարքն ավարտվել է ՊԲ 33651 զորամասում, որի տեղակայման վայրն է՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ալաշան գյուղը, որտեղ և ներկայումս իրենց ծառայությունն են իրականացնում թիվ ՍԴ3/0115/01/20 քրեական գործով վկաներ՝ մայոր Համիկ Արայիկի Սիմոնյանը և կապիտան Ռոբերտ Հենրիկի Մոսյանը: Քրեական գործով մեկ այլ վկան՝ Աշոտ Գոռի Եգանյանը (…) ներկայումս գտնվում է ծառայության մեջ, իսկ զորամասի տեղակայման վայրն է՝ Տավուշի մարզի Բերդ քաղաքը, (վկաներից միայն երկուսն են բնակվում Երևան քաղաքում) որպիսի հանգամանքը կարող է խոչընդոտել ողջամիտ ժամկետներում գործի քննությանը: (…)»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

9. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *թիվ ՍԴ3/0115/01/20 քրեական գործն ըստ մեղադրանքի Գառնիկ Միհթարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով և Հարություն Աղայանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, ընդդատյա՞ է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

10.1 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի*

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթեր 98-103:

կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[3]*:*

11. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]*:*

Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային*

---

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[4] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված):

Ավելին, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը) (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]*:*

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական*

---

[5] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը»:*

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ Օրենսդիրը քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու համար սահմանել է հետևյալ պայմանների միաժամանակյա պարտադիր առկայության պահանջ, այն է՝ ա) պետք է առկա լինի քրեական գործի տարածաքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ բոլոր մեղադրյալների համաձայնությունը, բ) տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը պետք է բնակվեն տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- 2021 թվականի մայիսի 3-ին ամբաստանյալ Գ.Մխիթարյանի պաշտպաններ Ա.Կարապետյանը և Ս.Հովհաննիսյանը միջնորդություն են ներկայացրել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, խնդրելով քրեական գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարան[6]: Պաշտպանների միջնորդությանը միացել են ամբաստանյալ Գ.Մխիթարյանը, գործով մյուս ամբաստանյալ Հ.Աղայանը և նրա պաշտպաններ Վ.Հայրապետյանը ու Ռ.Մարտիրոսյանը, տուժողի իրավահաջորդ Ա.Լևոնյանը և վերջինիս ներկայացուցիչ Հ.Գալստյանը, նշելով, որ Երևան քաղաքում գործի քննությունն ավելի նպատակահարմար կլինի[7]: Տուժող Վ.Բդոյանն իր դիմումով հայտնել է, որ առողջական վիճակը թույլ չի տալիս ներկա գտնվել դատական նիստին:

- Քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս, մասնավորապես՝ ամբաստանյալ Գ.Մխիթարյանը բնակվում է Արարատի մարզում, ամբաստանյալ Հ.Աղայանը և վկաներ Կ.Գրիգորյանը, Ռ.Սահակյանը՝ Երևան քաղաքում, տուժող Վ.Բդոյանը, վկա Մ.Աբրահամյանը և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Հ.Գալստյանը՝ Արմավիրի մարզում, տուժողի իրավահաջորդ Ա.Լևոնյանը և վկա Ջ.Խուդոյանը՝ Արագածոտնի մարզում, վկա Պ.Առուստամյանը՝ Գեղարքունիքի մարզում, վկա Ա.Ոսկանյանը՝ Լոռու մարզում, իսկ վկա Ա.Եգանյանը գտնվում է զինվորական ծառայության մեջ՝ Տավուշի մարզում: Դատակոչի ենթակա անձանցից երկուսը՝ Հ.Սիմոնյանը և Ռ.Մոսյանը, գտնվում են զինվորական ծառայության մեջ՝ Արցախի Հանրապետությունում[8]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ դատավարության մասնակիցների՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս բնակվելու և գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ ամբաստանյալների համաձայնության առկայության պայմաններում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված իրավակարգավորումների համաձայն քրեական գործի տարածքային ընդդատությունը

---

[6] Տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթեր 215-216:
[7] Տե՛ս քրեական գործ, հատոր 10, թերթ 225:
[8] Տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 194-195, հատոր 11, թերթեր 54, 56:

փոխելը եղել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի իրավասության շրջանակներում:

Վերը նշվածի պայմաններում հարկ է փաստել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիրքորոշումները՝ դատավարության մասնակիցներից միայն երկուսի՝ Երևանում բնակվելու վերաբերյալ կանխորոշիչ լինել չեն կարող, քանի որ վերը հիշատակված իրավանորմի պահանջը պահպանված է:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ թիվ ՍԴ3/0115/01/20 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Գառնիկ Մխիթարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով և Հարություն Աղայանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 51-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՍԴ3/0115/01/20 քրեական գործն ըստ մեղադրանքի Գառնիկ Մխիթարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով և Հարություն Աղայանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ